

«Կանաչ» դեղատուն

«Կանաչ դեղատուն» ծրագրի նպատակն է Շուշիում հիմնադրել ժամանակակից դեղատուն, որը քաղաքում բացակայում է, քաղաքի բնակչությանը սուբսիդավորված գներով դեղորայք տրամադրելու, փոքր ու միջին բիզնեսը խթանելու և մշտական աշխատատեղեր ստեղծելու նպատակով:

Ծրագրի արդյունքում լիովին կվերանորոգվի Շուշիի պատմական շինություններից մեկը՝ «Կանաչ» դեղատունը, դրան հարող թանգարանի տարածքն ու պատմական Թաղևոսի աղբյուրը:

Ծրագիրը մինևույն ժամանակ և՛ վերակառուցողական է՝ համահունչ քաղաքի նոր հատակագծին, և՛ սոցիալական-բարեգործական է, քանի որ ուղղված է բնակչության ընդհանուր առողջական վիճակի բարելավմանը: Ի լրումն, վերակառուցման շնորհիվ՝ հնաոճ դեղատուն, բարեկարգված թանգարանային հրապարակ և այլն, կբարձրանա Շուշիի գրավչությունը գրոսաշրջիկների և այցելուների համար:

Ծրագրի իրականացման արդյունքում գոյացած շահույթն ուղղվելու է դեղատան ընդլայնմանն ու տեխնիկական համալրմանը, ինչպես նաև քաղաքի ենթակառուցվածքի վերականգնմանը, բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը:

Ծրագիրն իրականացվում է «Վիվա Սել» ընկերության համաֆինանսավորմամբ:

Ծրագրի իրականացման ներկա փուլում հաստատված նախագծի հիման վրա կատարվում են շենքի և շրջակա տարածքի մաքրման աշխատանքները, սկսված է շինարարության նախապատրաստական փուլը:

